

2020

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ _____	1
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ _____	2
ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ _____	4
ՀԱՅՏԵՐ _____	4
ԱՐՏՈՆԱԳՐԵՐ _____	9
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ _____	11
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ _____	15
ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	15
ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ _____	16
ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ _____	17
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ _____	18
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ _____	18
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ _____	18
ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ _____	19
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ _____	20
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ _____	22

*Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից*

*Խմբագրական կոլեգիա՝*

*Քրիստինե Համբարյան*

*Մուսաննա Դավթյան*

*Արփինե Եզանյան*

*0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3*

*Հեռ. 011 597 534 հայտերի քննունման բաժին*

*Հեռ. 011 597535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին*

*Internet: [www.aipa.am](http://www.aipa.am)*

*E-mail: [armpat@aipa.am](mailto:armpat@aipa.am)*

## ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության գործակալությունը 2020 թվականին, չնայած համավարակի առկայությանը և նույնիսկ մեզ պատուհասած պատերազմի ընթացքում արել է ամեն հնարավորը իր գործառույթները պատշաճ կատարելու համար: Գործակալությունը 2020 թվականին իրականացրել է մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթները:

Գործակալությունը 2020 թվականին անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը ավելի հասանելի է դարձրել: Ավելացել են էլեկտրոնային տարբերակով ներկայացվող արդյունաբերական սեփականության օբյեկտներին վերաբերող հայտերի քանակը, կատարվել են տվյալների թվայնացում, հրապարակվել են պաշտոնական տեղեկություններ, թարմացվել է Նիցայի դասակարգիչը: Իրականացվել է մտավոր սեփականության օբյեկտներին վերաբերող հայտերի և դրանց ամբողջ գործավարությանը վերաբերող փաստաթղթերի թվայնացում:

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Մտավոր սեփականության գործակալությունը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ մտավոր սեփականության բնագավառում:

Գործակալությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ընդունումն ու փորձաքննության անցկացումը, պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց օգտագործման իրավունքի ընձեռման՝ լիցենզային պայմանագրերի, և բաց լիցենզիաների գրանցումը:

Իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների մասին պաշտոնական տեղեկությունները Գործակալությունը նախապատրաստում և հրապարակում է իր կայքէջում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան Գործակալությունը համագործակցում է նմանատիպ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Գործակալության կազմում գործում են հետևյալ բաժինները.


# ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ



Քրիստինե Համբարյան  
Գործակալության պետ



Շուշիկ Մխիթարյան  
Պետի տեղակալ



Գյուտերի և օգտակար մոդելների բաժին  
Ավետիս Պերյան




Ապրանքային նշանների և  
արդյունաբերական նմուշների բաժին  
Լուսինե Մանուկյան




Հեղինակային իրավունքի և  
հարակից իրավունքների բաժին  
Արմենուհի Շահինյան



Տեղեկատվական-տեխնոլոգիական  
ապահովման բաժին  
Արփինե Եգանյան



Հայտերի ընդունման բաժին  
Սուսաննա Դավթյան



Պետական գրանցամատյանների բաժին  
Արա Աբգարյան

# ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ


## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

### ՀԱՅՏԵՐ

2020 թվականին Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 70 գյուտի և 29 օգտակար մոդելի հայտ, որոնցից 87-ը՝ ազգային հայտատուներից, 12-ը՝ օտարերկրյա հայտատուներից (Ռուսաստանի Դաշնություն, Շվեյցարիա, Իսպանիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Մինգապուր):

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է գյուտի և օգտակար մոդելի 9 հայտ (հայտերի ընդհանուր քանակի 9, 09%-ը):

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ


2020 թվականին գործակալությունը ստացել է 4 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2020 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 55 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 126 հայտով, ընդ որում՝ 70 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 33 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 16 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 7 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:


Ինչպես նաև կայացվել է 1 գյուտի արտոնագրով՝ արտոնագրաունակության մասին եզրակացության հրապարակման մասին որոշում:

### ՀԱՅՏԵՐԻ ԸՆԿՐՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԴԻԱԳՐԱՄԻ ՏԵՍԵՐԿ



# ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՑ ՄՏԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՏԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը ընդհանուր թվի մեջ
1-2.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	15	15,15%
1-2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	15	15,15%
3.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	11	11,11%
4.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	10	10,1%
5.	Չափում և օպտիկա (G01-G03)	8	8,08%
6.	Օրգանական քիմիա (C07, A01N)	7	7,07%
7-8.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	5	5,05%



## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

7-8.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	5	5,05%
9-19.	Այլ բնագավառներ	23	23,23%
	<b>Ընդամենը</b>	<b>99</b>	<b>100</b>

ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	2018	2019	2020	Ընդհանուր թիվը (2018- 2020)	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	20	22	15	57	14,5%
2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	16	13	15	44	11,20%
3.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	9	14	10	33	8,40%
4.	Չափում և օպտիկա (G01-G03)	11	10	8	29	7,38%
5.	Մանրամթերք և ծխախոտ (A21-A24)	11	14	1	26	6,62%
6.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	8	9	5	22	5,60%

## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

7.	Օրգանական քիմիա (C07, A01N)	6	8	7	21	5,34%
8.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	6	7	5	18	4,58%
9.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41- A47)	2	3	11	16	4,07%
10	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	4	8	3	15	3,82%
11.	Շինարարություն (E01- E06)	4	4	4	12	3,05%
12-13.	Տրանսպորտ (B60-B68)	6	5	0	11	2,80%
12-13.	Մետաղագործություն և էլեկտրոլիզ (C21- C23, C25)	5	6	0	11	2,80%
14-15.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	4	3	2	9	2,29%
14-15.	Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11)	5	2	2	9	2,29%
16.	Ֆիզիկական և քիմիական գործընթացներ (B01- B09)	5	1	2	8	2,04%


## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

17.	Լուսավորում, ջեռուցում, սառնարանային տեխնիկա (F21-F28)	2	2	0	4	1,02%
18.	Այլ բնագավառներ	17	22	9	48	12,21%
	Ընդամենը	141	153	99	393	100%

### ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2020 թվականին տրվել է գյուտի 72 արտոնագիր և օգտակար մոդելի 29 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է գյուտի 7 արտոնագիր (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ղազախստան, Գերմանիա, Սինգապուր, Շվեյցարիա) և օգտակար մոդելի 5 արտոնագիր (Ռուսաստանի Դաշնություն):


### ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2020 թվականին տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 3424 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 189-ը, իսկ օգտակար մոդելի 601 արտոնագրերից գործում են 109-ը:

ԳՐԱՖԻԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ (2016-2020)



2020 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 5244 Եվրասիական արտոնագրեր:

### ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ


2020 թվականին նվազել է Մտավոր սեփականության գործակալություն ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը:

Ազգային ընթացակարգով ստացվել է 2418 հայտ, ինչը 11%-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 2722 հայտ): Հայտերից 1900-ը ստացվել է ազգային հայտատուներից: Ապրանքային նշանների թվով 2424 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, գրանցվել են 1868 ապրանքային նշաններ, որոնցից 1467-ը՝ ազգային հայտատուների անունով: Գրանցված ապրանքային նշանների քանակն աճել է ընդամենը 38%-ով նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 1353 հայտ), 13%-ով նվազել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումների քանակը (156 մերժում՝ նախորդ տարվա 179-ի դիմաց), հետ կանչված են համարվել 61 հայտ: 2020 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1868 ապրանքային նշանների վկայագրեր:

Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշամաք ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2710 ծանուցում, ինչը 15% պակաս է նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 3198 ծանուցում):

Միջազգային ծանուցումներով կայացվել է 2107 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին կայացվել է 1002, իսկ վերջնական մերժման մասին՝ 254 որոշում:

# ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ



ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	1900		1900
AG	Անտիգուա և Բարբուդա		3	3
AE	Արաբական Միացյալ Ամիր.	5	1	6
AT	Ավստրիա		22	22
AU	Ավստրալիա		7	7
BA	Բոսնիան և Հերցեգովինա		1	1
BB	Բարբադոս	4		4
BE	Բելգիա	2	26	28
BG	Բուլղարիա	2	31	33
BR	Բրազիլիա		3	3
BY	Բելառուս		49	49
BZ	Բելիզ	1	7	8
CA	Կանադա	6	10	16

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

CH	Շվեյցարական Համադաշնություն	63	151	214
CN	Չինաստան	30	320	350
CU	Կուբա	1		1
CY	Կիպրոս	7	63	70
CZ	Չեխիայի Հանրապետություն		8	8
DE	Գերմանիա	21	196	217
DK	Դանիա	2	19	21
DM	Դոմինիկա		1	1
EE	Էստոնիա		5	5
EG	Եգիպտոս	3		3
EC	Էկվադոր			0
ES	Իսպանիա		51	51
FI	Ֆինլանդիա	27	5	32
FR	Ֆրանսիա	11	70	81
GB	Միացյալ Թագավորություն	9	66	75
GE	Վրաստան	12	13	25
GR	Հունաստան	2	1	3
HR	Խորվատիա	2		2
HU	Հունգարիա		57	57
ID	Ինդոնեզիա		5	5
IE	Իռլանդիա	6	11	17
IL	Իսրայել	10	5	15
IN	Հնդկաստան	4	23	27
IR	Իրան		6	6
IT	Իտալիա	3	142	145
JO	Հորդանան	1		1
JP	Ճապոնիա	22	45	67
KR	Կորեայի Հանրապետություն	27	69	96
KY	Կայմանյան կղզիներ	6	1	7
KZ	Ղազախստան		34	34
LB	Լիբանան	1	1	2
LK	Շրի Լանկա	1		1
LI	Լիխտենշտայն		9	9
LV	Լատվիա		9	9
LT	Լիտվա		7	7
LU	Լյուքսեմբուրգ	3	42	45

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

MC	Մոնակո		5	5
MD	Մոլդովայի Հանրապետություն		7	7
MK	Մակեդոնիա		1	1
MX	Մեքսիկա	7	1	8
MY	Մալայզիա			0
NL	Նիդերլանդներ	8	48	56
NO	Նորվեգիա		3	3
NZ	Նոր Զելանդիա		1	1
PL	Լեհաստան	3	23	26
RO	Ռումինիա		9	9
PR	Պուերտո Ռիկո		1	1
PT	Պորտուգալիա		9	9
QA	Քատար	3	2	5
RU	Ռուսաստանի Դաշնություն	52	574	626
SC	Սեյշելյան	3	2	5
SE	Շվեդիա	4	16	20
SG	Սինգապուր		26	26
SI	Սլովենիա	2	8	10
SK	Սլովակիա		6	6
SM	Սան Մարինո		2	2
TJ	Տաջիկստան		1	1
TH	Թայլանդ	2		2
TN	Թունիս		1	1
TR	Թուրքիա		58	58
VN	Վիետնամ		3	3
VG	Վիրջինյան կղզիներ	3	6	9
UA	Ուկրաինա	6	76	82
UZ	Ուզբեկստան		7	7
USA	ԱՄՆ	125	219	344
Others		6		6
<b>Ընդամենը</b>		<b>2418</b>	<b>2710</b>	<b>5128</b>

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 27 հայտ:

2020 թվականին առաջատար դիրքում են 33-րդ դասի (ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի)) ապրանքների համար գրանցման




## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 478 հայտ (2018 թվականին՝ 463 հայտ), երկրորդ տեղում են 35-րդ դասի (գովազդ-գործարարության կառավարում, կազմակերպում, վարչարարություն. գրասենյակային ծառայություններ) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 381 հայտ (2019 թվականին՝ 522 հայտ) և երրորդ տեղում են 43-րդ դասի (սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում) ծառայությունների համար գրանցման ներկայացվածները, որոնց թիվը կազմում է 217 հայտ (2019 թվականին՝ 362 հայտ):ապրանքային նշանները):

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում 76%-ով աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը (775 հայտ) նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 439 հայտ):

#### Էլեկտրոնային հայտեր




### ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020 թվականի ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ 131 գրավոր առարկություններ և դիտողություններ, ինչը 23%-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 171

# ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

առարկություն):

Առարկություններ և դիտողություններ



## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2020 թվականին նվազել է Գործակալություն ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը: Ազգային ընթացակարգով ստացվել է 33 հայտ (2018 թվականին՝ 57 հայտ): Հայտերից 27-ը ստացվել են ազգային հայտատուներից, ինչը 10-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 37 հայտ): Գրանցվել է 28 արդյունաբերական նմուշ, որոնց տրվել են արդյունաբերական նմուշի գրանցման վկայագրեր:

Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 118 ծանուցում, ինչը 3-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2019 թվականին՝ 121 ծանուցում):

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական նմուշի 7 հայտ (2019 թվականին՝ 7 հայտ):

2020 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 34 արդյունաբերական նմուշների վկայագրեր:

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

### ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է 838 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգման և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող 25 դիմում իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգման մասին:

Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 712 փոփոխություն և այլ գործողություններ:

## ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

### ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 130 ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու, 28 ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու, 1 ապրանքային նշանի ենթալիցենզիայի, 5 ապրանքային նշանների լիցենզիաների փոփոխությունը գրանցելու, ապրանքային նշանների 6 լիցենզիաները չեղյալ հայտարարելու մասին, ինչպես նաև 4 արտոնագրի ոչ բացառիկ լիցենզիա տալու, 2 արտոնագրի զիջման, 1 արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի փոխանցման, 1 արդյունաբերական նմուշի լիցենզիայի փոփոխության, 1 արտոնագրի բաց լիցենզիայի մասին դիմումներ:

#### ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2020 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ ներկայացվել է 2 հանրահայտ ապրանքային նշանի վերաբերյալ դիմում, 35 ապրանքային նշանների և 1 գյուտի վերաբերյալ դիմում-բողոքներ: Ներկայացված բողոքներից և դիմումներից 12-ը բողոքարկման խորհուրդը բավարարել է, իսկ 13-ի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում:

#### ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2019թ. ընթացքում Գործակալությունը 70 դատական գործով մասնակցել է 162 դատական նիստի:

### ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2020 թ. մայիսի 11-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է «1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արդյունաբերական նմուշների պահպանության մասին» արձանագրությունը: 2020 թ. Դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված փաստաթուղթերը ի պահ են հանձնվել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն Դ. Թանգին ՄԱԿ-ում և ք. Փնևում այլ միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչի կողմից:

2020 թվականի մայիսի 20-ին «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից:

«Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաբեշի պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը վավերացրեց 2020 թվականի դեկտեմբերի 30-ին:

«Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» նոր օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ ազգային ժողով, իսկ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի նախագիծը՝ ՀՀ կառավարություն:

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2020 թվականին հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 24 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են 72 գյուտի, 29 օգտակար մոդելի, 29 արդյունաբերական նմուշի, 1868 ապրանքային նշանի մասին պաշտոնական տեղեկություններ, ընդգրկվել են նաև ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին տեղեկություններ:

2020 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 24 համար: Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, Գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2019 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

2020 թվականին էլեկտրոնային եղանակով Գործակալություն է ներկայացվել 775 ապրանքային նշանի (2019 թվականին՝ 439), 6 գյուտի և օգտակար մոդելի (2019 թվականին՝ 7) և 10 արդյունաբերական նմուշի հայտ (2019 թվականին՝ 7):

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ոչ թղթային տեխնոլոգիաներին անցնելու նպատակով ձեռնարկվել են մի շարք քայլեր: Թվայնացվել են մոտ 1868 ապրանքային նշանի, 80 գյուտի, 29 օգտակար մոդելի, 35 արդյունաբերական նմուշի փաստաթղթերը: Թվայնացման աշխատանքները շարունակվում են նաև 2021 թվականին:

2020 թվականի ընթացքում շարունակվել է հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի արդիականացման աշխատանքները: Իրականացվել է նաև Մտավոր սեփականության գործակալության նոր կայքի ստեղծման աշխատանքները, որը կներդրվի 2021թ. ապրիլին:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գործակալությունը շարունակել և ավելի ամրապնդել է համագործակցությունը ՄՍՀԿ, ԵԱԱԳ միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների հետ: Համագործակցության հիմնական կարևոր ուղղությունը 2020 թվականին Գործակալության մասնագետների առցանց մասնակցությունն էր տարբեր միջոցառումներին՝ համաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին, գործնական հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են մտավոր սեփականության բնագավառի զարգացման ուղիները:

**2020 թվականի փետրվարի 19-21-ը** Գործակալության ներկայացուցիչը Մոսկվա քաղաքում մասնակցել է 2020 թվականի փետրվարի 3-ի Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին պայմանագրի կատարման որոշ հարցերի վերաբերյալ քննարկմանը, որից հետո՝ հունիսի 20-30-ին և դեկտեմբերի 10-ին քննարկումները շարունակվել են տեսակոնֆերանսի ձևաչափով:

**2020 թվականի ապրիլի 22-24-ը** Գործակալության աշխատակիցները մասնակցել են Ռոսպատենտի թվային նախագծերի շնորհանդեսին, որն անցկացվել է վեբինարի ձևաչափով: Ներկայացվել են հետևյալ նախագծերը՝ «Արտոնագրերի տեղեկատվության որոնման թվային պլատֆորմ», ՊՏՀ «Առցանց Ռոսպատենտ», ՊՏՀ «Անհատականացման միջոցների փորձաքննության խելացի համակարգ», ՊՏՀ «Շրջանառության մեջ գտնվող մտավոր սեփականության օբյեկտների իրավունքների և անհատականացման միջոցների բաշխված գրանցամատյան» և ՊՏՀ «Կառավարչական որոշումների աջակցության պետական տեղեկատվական համակարգ»: Նշված համակարգերը նախատեսված է գործարկել մինչև 2021թ. ավարտը:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**2020 թվականի ապրիլի 30-ին** Գործակալության ներկայացուցիչները տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել են Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության միջպետական խորհրդի շրջանակներում գործող ԱՊՀ անդամ պետությունների տարածաշրջանային արտոնագրային և տեղեկատվական արտադրանքի արդյունաբերական արտադրության նախագծի համակարգող խորհրդի (CISPATENT) նիստին:

**2020 թվականի հունիսի 19-ին** անցկացվել է ԵՏՀ Խորհրդին կից մտավոր սեփականության հարցերով խորհրդատվական կոմիտեի 10-րդ նիստը տեսակոնֆերանսի ձևաչափով, որին մասնակցել է Գործակալության պետի պաշտոնակարը և կոմիտեի մյուս անդամները:

**2020 թվականի օգոստոսի 6-7-ը** Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) տեղի է ունեցել Եվրասիական արտոնագրային կազմակերպության վարչական խորհրդի բյուջետային աշխատանքային խմբի 25-րդ նիստը, որին մասնակցել է Գործակալության ներկայացուցիչը տեսակոնֆերանսի ձևաչափով:

**2020 թվականի օգոստոսի 19-ին, ինչպես նաև սեպտեմբերի 3-ին և հոկտեմբերի 2-ին** առցանց ձևաչափով անցկացվել են քննարկումներ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում «Ինտերնետ» տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցում մտավոր սեփականության իրավունքների խախտումների դեմ պայքարի հիմնական մոտեցումների մասին, որին մասնակցել են ԵՏՄ անդամ պետությունների աշխատանքային խմբում ընդգրկված համապատասխան աշխատակիցները:

**2020 թվականի օգոստոսի 25-ին** Քիշնևում (Մոլդովայի Հանրապետություն) անցկացվել է Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության հարցերով ԱՊՀ միջպետական խորհրդի 10-րդ նիստը: Նիստին զեկույցով հանդես է եկել Գործակալության պետի պաշտոնակարը:

**2020 թվականի օգոստոսի 28-ին** Գործակալության աշխատակիցները տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել են Եվրասիական տնտեսական

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

հանձնաժողովի կողմից կազմակերպված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդակցությանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են որոնման ծառայություններ ստեղծելու վերաբերյալ առաջարկված տարբերակները, որոնք թույլ կտան առցանց որոնել անդամ պետություններում պահպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը:

**20 թվականի սեպտեմբերի 10-11-ը** տեղի է ունեցել Եվրասիական արտոնագրային կազմակերպության վարչական խորհրդի երեսուներեցերորդ (քսանյոթերորդ հերթական) նիստը, որին մասնակցել է Գործակալության պետի պաշտոնակարը՝ որպես վարչական խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ:

Նիստում քննարկվել են կազմակերպության ընթացիկ գործունեությանը վերաբերող հարցեր, ինչպես նաև վարչական խորհրդի նոր նախագահի ընտրության հարցը:

Քվեարկության արդյունքում խորհրդի նախագահ է ընտրվել Տաջիկստանի լիազոր ներկայացուցիչը, իսկ նախագահի տեղակալներ՝ Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության լիազոր ներկայացուցիչները:

**2020 թվականի սեպտեմբերի 21-24-ը** առցանց ձևաչափով տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության 61-րդ նստաշրջանը, որին մասնակցել է Գործակալության պետի պաշտոնակարը և աշխատակիցը:

**2020 թվականի հոկտեմբերի 8-ին** տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO), ՄԱԿ գարգացման ծրագրի (UNDP), Ենթակառուցվածքների Ներդրումային Ասիական Բանկի (AIIB), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE) կողմից կազմակերպված առցանց հանդիպում՝ «Կանանց դերը միջազգային

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

կազմակերպություններում» խորագրով, որին մասնակցել է Գործակալության աշխատակիցը:

**2020 թվականի հոկտեմբերի 12-16-ը** Գործակալության աշխատակիցը տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից անցկացվող նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համակարգի իրավական մշակման աշխատանքային խմբի տասնութերորդ նստաշրջանին:

**2020 թվականի հոկտեմբերի 15-16-ը** տեղի է ունեցել Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարման տարածաշրջանային տեսակոնֆերանս, որին մասնակցել է Գործակալության աշխատակիցը:

**2020 թվականի նոյեմբերի 6-ին** տեսակապի միջոցով Գործակալության աշխատակիցը մասնակցել է ՄՍՀԿ ներքին վերահսկողության բաժնի 2021 թվականի տարեկան վերահսկողության պլանի քննարկմանը:

**2020 թվականի նոյեմբերի 12-ին** Հեղինակների միջազգային ֆորումի կողմից անցկացվել է առցանց միջոցառում՝ «Ինչպե՞ս է փոխատվության իրավունքն օգնում ապրուստ ստեղծելուն» խորագրով, որին մասնակցել է Գործակալության աշխատակիցը:

**2020 թվականի նոյեմբերի 16-20-ը** տեսակոնֆերանսի ձևաչափով տեղի է ունեցել ՄՍՀԿ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մշտական հանձնաժողովի 40-րդ նստաշրջանը, որին մասնակցել է Գործակալության աշխատակիցը:

**2020 թվականի նոյեմբերի 25-ին** տեսակապի միջոցով Գործակալության աշխատակիցը մասնակցել է «Ենթատարածաշրջանային ինովացիոն քաղաքականության հեռանկար 2020. Արևելյան Եվրոպա և Հարավային Կովկաս» խորագրով սեմինարին:

2020 թվականի դեկտեմբերի 21-22-ը առցանց ձևաչափով անցկացվել է «Անտիկոնտրաֆակտ-2020» 8-րդ միջազգային համաժողովը՝ նվիրված արդյունաբերական արտադրանքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության խնդիրներին, որին մասնակցել են Գործակալության աշխատակիցները:

2020 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսներին՝ ամենամսյա ռեժիմով տեսակապի միջոցով տեղի են ունեցել քննարկումներ EU4Digital - S2S ոլորտում նորարարություններ ծրագրի շրջանակներում «Մտավոր սեփականության իրավունքի կառավարում թվային նորարարությունների համար» թեմայով քննարկումներ Գործակալության աշխատակցի մասնակցությամբ: